ԱՅՑ

# Լին Պասկո. «Երեք կողմերի միջեւ ուղիղ խոսակցություն»

Այսօր պաշտոնական այցով Բաքվում է գտնվում ԱՄՆ վարչակազմի պատվիրակությունը պետական քարտուղարի՝ ԱՊՀ երկրների հարցերով հատուկ խորհրդական Ստեֆան Սեստանովիչի գլխավորությամբ: Ինչպես նշում է ինքը՝ պրն Սեստանովիչը, «ադրբեջանա-ամերիկյան հարաբերությունները լավ են եւ շարունակելու են զարգանալ»:

Երեկ, հունիսի 3-ին, պատվիրակությունը Երեւանում էր. շուրջ երկժամյա հանդիպում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, «որի ընթացքում քննարկվեցին հայ-ամերիկյան փոխհարաբերություններին առնչվող բոլոր հարցերը»: Բացի այդ, հանդիպումներ նաեւ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի, ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի եւ այլ գերատեսչությունների ղեկավարների հետ:



Օրվա երկրորդ կեսին ԱՄՆ պատվիրակությունն այցելեց նաեւ ՀՀ կառավարություն, ուր հանդիպեց վարչապետ Արմեն Դարբինյանի եւ այլ անձանց հետ: Պատվիրակության կազմում էին նաեւ Մինսկի խմբի ամերիկյան ներկայացուցիչ Լին Պասկոն եւ ԱՄՆ դեպարտամենտի ԱՊՀ հարցերով գլխավոր կոորդինատոր Ռիչարդ Մորնինգստարը:

Հանդիպումից անմիջապես հետո պրն Սեստանովիչը ճեպազրույց ունեցավ լրագրողների հետ. «Սա արդյունավետ քննարկումների օր էր. քննարկվեցին ռազմական անվտանգության, մարդասիրական օգնության խնդիրներ: Հատկապես կուզեմ նշել մեր 2-ժամյա հանդիպումը ՀՀ նախագահ պրն Քոչարյանի հետ: Կարող եմ ասել, որ հայ-ամերիկյան հարաբերությունները լավ վիճակում են»: Պատասխանելով այն հարցին, թե քննարկվե՞լ են կոնկրետ տնտեսական ծրագրերին վերաբերող հարցեր, պրն Սեստանովիչն ասաց միայն «այո»՝ խոսքը փոխանցելով Ռիչարդ Մորնինգստարին. «Մենք ունենք լայնածավալ օգնության ծրագիր, որի ծավալները հասնում են 130-140 մլն դոլարի: Օգնության նման ծավալները ցույց են տալիս, որ մենք կլինենք այստեղ»:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Ստեֆան Սեստանովիչը ասաց. «Մենք գտնում ենք, որ Մինսկի խումբը պետք է շարունակի իր գործունեությունը մինչեւ հարցի դիվանագիտական լուծումը: Նման հարցեր նույնպես քննարկվել են մեր հանդիպումների ընթացքում, եւ առավել հանգամանորեն կքննարկվեն ՀՀ արտգործնախարարի՝ Վաշինգտոն կատարելիք այցի ժամանակ»:

Թե ինչպես է ԱՄՆ դեպարտամենտը գնահատում Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հայտարարությունը (Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման փաթեթային տարբերակի առնչությամբ), նա պատասխանեց. «Ես ծանոթ չեմ այդ հայտարարությանը եւ ոչինչ ասել չեմ կարող»: Մինչդեռ իր կողմից նշվեց, որ «մենք միշտ էլ կողմ ենք եղել հակամարտող կողմերի ուղիղ բանակցություններին, բայց որոշ մարդիկ դա չէին ցանկանում»:

Զրույցին զուգահեռ «Սնարք»-ի թղթակից Արման Ջիլավյանը մի կարճ զրույց ունեցավ Լին Պասկոյի հետ եւ տրամադրեց **«Ազգին»**: Ըստ Լին Պասկոյի «Մեր հիմնական նպատակը բանակցությունների վերսկսումն է հենց այս տարի: Այն կարծիքը, որ համանախագահները հակամարտող կողմերին ուզում են պարտադրել լուծման որեւէ տարբերակ՝ սխալ է: Մենք նպատակադրված ենք երեք կողմերի միջեւ հաստատել ուղիղ խոսակցություն: Կասկածներից վեր է, որ հարցի վերջնական լուծումը ենթադրում է հաշվի նստել երեք կողմերի՝ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ժողովուրդների հետաքրքրությունների հետ: Մեր վերջնական նպատակն է տարածաշրջանում ստեղծել կայունություն եւ համագործակցություն»:

ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆ


## ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

Երեւանում ԻԻՀ դեսպանությունը շտապ վաճառում է 1988-ի արտադրության, մուգ մոխրագույն «BMW-730i» մակնիշի ավտոմեքենա: Ցանկացողները աշխատանքային օրերին կարող են այցելել ԻԻՀ դեսպանություն ժամը 9-17-ը, հետեւյալ հասցեով. Կոմիտաս, Բուդաղյան 1 կամ զանգահարել 280457 եւ 223340 հեռախոսահամարներով:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

առանձնատուն, 80 քառ. մ ննջասենյակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

**Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23**

Հայաստանի ամերիկյան համալսարան
հատուկ դասընթացների բաժին

Հայ-ֆրանսիական հետազոտությունների հանձնաժողովի նախագահ, դոկտոր

## ՀԵՆՐԻ ԱՍՏԱՐՋՅԱՆԸ

*ներկայացնում է*

## «Քրդական հեղափոխությունը եւ հայ դատը»

Չորեքշաբթի՝ հունիսի 4-ին
ժամը 18:30-ին
Հայաստանի ամերիկյան համալսարանի
փոքր դահլիճում (5-րդ հարկ)

Մուտքն ազատ է

*Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58*

## ՄԻԴԼԵՆԴ ԱՐՄԵՆԻԱ ԲԱՆԿԸ

Ներմուծում է պլաստիկ քարտի նոր տեսակ՝

Դեբիտային քարտ GlobalAccess, որը թույլ է տալիս.




- Ձեր հաշիվներից կանխիկ փող հանել, ինչպես դրամի, այնպես էլ դոլարի տեսքով
- ստուգել Ձեր հաշիվները
- Միդլենդ Արմենիա Բանկի մի հաշվից մյուսին գումարներ փոխանցել
- ներդնել ավանդներ

Մեկ այդպիսի դեբիտային քարտի շնորհիվ Ձեր հաշիվներում եղած գումարը Ձեզ համար մատչելի կլինի օրական 24 ժամ, տարեկան 365 օր, աշխարհի 100 երկրներում գտնվող ավելի քան 350 000 կետերում

**Եթե Ձեզ պետք է հենց այդպիսի հատկություններով քարտ, ապա Ձեզ պետք է Global Access, որը տրամադրում է Միդլենդ Արմենիա Բանկը, բանկ, որին կարելի է վստահել:**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ** եւ **ՕՊԵՐԱՅԻ ԹԱՏՐՈՆԻ** մերձակայքում տեղադրված Ավտոմատ Գանձման Մեքենաները (ԱԳՄ) հնարավորություն են տալիս **ՇՈՒՐՋՕՐՅԱ** օգտվել ֆինանսական ծառայություններից:

Քարտ ստանալու համար դիմեք Հանրապետության հրապարակում գտնվող մեր բաժանմունք:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 58-70-95, 58-70-88



ԵՏ


«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 835. Տպաքանակը՝ 3500. Ստորագրված է տպագրության՝ 3. 05. 1998. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@